

Ա. Պ. ԶԵՆՈՎ

# ՍՊԻՏԱԿԱԾԱԿԱՏԸ



891.715  
Զ-34

ՊԵՏԷՐՍ

831.715  
2-34

պ

Ա. Պ. ԶԵԽՈՎ

30 MAY 2011

831.715  
2-34

# Ս Պ Ի Տ Ա Կ Ա Ճ Ա Կ Ա Տ Ը

ԹԱՐԳՄ.

ԱՆՍՏԻՏ ՆԱՎԱԿԱՏԻԿՅԱՆ  
ՆԿԱՐՆԵՐԸ՝ Կ. ԿՈՒԶՆԵՑՈՎԻ

Պ Ե Տ Հ Ր Ա Ց

ՀԼԿՅԵՄ ԿԵ ԿԻՅ ՄԱՆԿԱԳԱՏԱՆԵԿԿԱԿԱՆ ԳՐԱԿԱՆՈՒՅՈՒՄԻ ՐԱԺԻՆ  
Յ Ե Ի Ե Վ Ա Ն 1 9 3 7

16 JUL 2013

4574


Խմբագիր՝ Հ. Հայրապետյան  
Տեխ. խմբագիր՝ Ստ. Ալբունյան  
Սրբագրիչ՝ Ա. Արգախանյան

БИБЛИОТЕКА  
Академии наук  
УРСР

В 0 52.284

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ  
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆ  
ԿԵՆՏՐՈՆ

8205-53



Սոված մայր — դայլը վեր կացավ, վոր գնա վոր-  
սի: Նրա բոլոր յերեք ձագերն ել, իրար կողքի կու-  
յեկած, պինդ քնած եյին և տաքացնում եյին միմյանց:  
Մայրը լիզեց նրանց ու գնաց:

Արդեն դարնանային մարտ ամիսն եր, բայց գի-  
շերները ծառերը ցրտից ճթճթում եյին այնպես, ինչ-  
պես դեկտեմբերին: Յեվ յեթե լեզուդ դուրս հանեյիր,  
ցուրտը կսկսեր ուժեղ կամթել:

Մայր — դայլը վատառողջ եր և կասկածամիտ:  
Նա ամենափոքր շշուկից ցնցվում եր և միշտ մտածում  
եր. չլինի՞ թե իր բացակայության ժամանակ վորեւե  
մեկը նեղացնի ձագուկներին: Մարդկանց և ձիերի  
հետքերի հոտը, կոճղերը, դարսված փայտը և աղբով  
ծածկված մութ ճանապարհը վախեցնում եյին նրան:  
Նրան թվում եր, թե ծառերի յետևը մթության մեջ,  
մարդիկ են կանգնած և ուր վոր, անտառից դենը, չնե-  
րը վրոնում են:

Նա արդեն յերիտասարդ չեր. հոտառությունը թու-  
լացել եր: Պատահում եր, վոր աղվեսի հետքը շան  
հետքի տեղ եր ընդունում, յերբեմն նույնիսկ հոտա-  
ռությունից խաբված, ճանապարհից շեղվում եր:  
Այդ բանը նրան յերբեք չեր պատահում յերիտասարդ  
հասակում: Թույլ առողջության պատճառով, նա  
այլևս հորթերը և մեծ վոչխարներ չեր վորսում, ինչպես  
առաջ, ձիերից ու քուռակներից հեռու յեր կենում և

կերակրվում եր միայն լեչերով: Սակավ եր պատահում, փոր թարմ միս ուտեր: Միայն գարնանը, յերբ թափառելով հանգիստում եր նապաստակի, խլում եր նրա ձագուկները կամ մտնում գյուղացիների գոմերը, վորտեղ գառներ կային:

Նրա վորջից չորս վերստ հեռու, փոստի ճանապարհի մոտ, ձմեռանոց կար: Այդտեղ ապրում եր պահակ Իգնատը, յոթանասուն տարեկան մի ծերուկ, վորը միշտ հագում եր և ինքն իրեն խոսում: Սովորաբար նա գիշերը քնում եր, իսկ ցերեկը մի փողանի հրացանը ձեռքին թափառում եր անտառում և չվչվացնում, վոր չները հարձակվեն նապաստակների վրա: Յերևի նա առաջ աշխատելիս ե յեղել իրրև մեքենագետ, վորովհետև ամեն անգամ, նախքան կանգ առնելը, գոչում եր «կանգնի՛ր, մեքենա» և նախքան առաջ գնալը՝ «Թափով առա՛ջ»: Նա ուներ մի ահագին, անհայտ ցեղի սև շուն, Արապկա անունով: Յերբ շունն իրենից շատ եր հեռանում, Իգնատը գոչում եր, «Յե՛ա դարձի՛ր»: Յերբեմն յերգում եր և յերգելիս տատանվում և հաճախ ընկնում (մայր—գայլը կարծում եր, վոր քամուց ե որորվում) և գոչում. «Ռեյսերից դուրս յեկա»:

Մայրը — գայլը հիշում եր, վոր ամուսնն ու աշնանը ձմեռանոցի մոտ արածում եյին մի վոչխար և յերկու մատղաշ մաքի: Յեվ յերբ նա մոտ որերս վազելով անցնում եր այն տեղով, նրան թվաց, թե գոմում մայրում են: Յեվ այժմ, մոտենարով ձմեռանոցին, գլխի եր ընկնում, վոր արգեն մարտ ամիսն է, և նկատի առնելով տարվա յեղանակը, գոմում պետք ե անպայման գառներ լինեյին:

Մայր—գայլը տանջվում եր քաղցից, մտածում եր թե ինչպիսի ազահուլթյամբ կսկսի ուտել գառնուկին և այդպիսի մտքերից նրա ատամները չխկչխկում, աչքերը փայլում եյին մթության մեջ, ինչպես յերկու ճրագ:

Իգնատի խրճիթը, սրահը, գոմն ու ջրհորը չըջարատված եյին բարձր ձյունակույտերով: Շուրջը լուռ եր: Արապկան, յերևի, սրահի մոտ քնած եր:

Մայր — գայլը ձյան կույտի վրայով բարձրացավ գոմի կտուրը և սկսեց գնչով ու թաթով փորփրել ծղոտե կտուրը: Ծղոտը փթած եր և փափուկ, այնպես վոր քիչ եր մնում գայլը ցած գլորվեր:

Հանկարծ նրա գնչին տաք գոլորչի դիպավ և գոմաղբի ու վոչխարի կաթի հոտ առավ: Ներքեում, ցուրտն զգալով, գառնուկը մեղմ մայեց: Անցքից թռչելով, գայլն առջևի թաթերի վրա ընկավ և այդ ժամանակ գոմում լավեց զիւ ճչոց, հաջոց, վոռնոց: Վոչխարները նետվեցին դեպի պատը, իսկ մայր — գայլը, վախենալով, բերանն առավ հենց առաջին պատահածն ու դուրս պրծավ:

Նա վազում եր լարելով իր ուժերը: Այդ ժամանակ, Արապկան զգալով գայլի ներկայութունը, կատաղաբար վոռնում եր, անհանգստացած հավերը կշկշում եյին, իսկ Իգնատը դուրս գալով դռան առաջ, գոչում եր. «Թափով առաջ, դեպի սուլոցը»: Նա սուլում եր ինչպես մեքենա և հետո՝ հո՛ — հո՛ — հո՛ — հո՛ —: Յեվ այդ վողջ ազմուկն արձագանքում եր անտառում:

Յերբ քիչ — քիչ ամեն ինչ լոեց, մայր — գայլը մի քիչ հանգստացավ և սկսեց նկատել, վոր իր վորսը, փորը բռնել եր ատամներով և քաշ եր տալիս ձյան վրայով, ավելի ծանր եր ու ավելի կոշտ, քան ընդհանրապես լինում են գառներն այդ ժամանակ: Յեվ նրանից ուրիշ տեսակ հոտ եր գալիս, և ինչ վոր տարորինակ ձայներ եյին լսվում:

մայր—գայլը կանգնեց և բեռը դրեց ձյան վրա, վոր հանգստանա և սկսի ուտել, բայց հանկարծ զգվանքով յետ ցատկեց: Դա վոչ թե գառնուկ եր, այլ շան լակոտ, սև մեծ գլխով և յերկար վոտներով, խոշոր ցեղի պատկանող, ճակատին ել մի մեծ սպիտակ խալ, ինչպիսին կար Արապկայի ճակատին: Դատելով շարժ ու ձևվից, դա մի կուպիտ, հասարակ բակապահ շնիկ եր: Շունիկը լիզեց իր տրորված, վիրավորված մեջքը, պոչը թափահարեց և սկսեց գայլի վրա հաջել:

Մայր — գայլը շան պես վոռնաց և փախավ



նրանից: Ծնիկն էլ նրա յետևից: Մայր գայլը յետ դարձավ և ատամներով կրճտացրեց: Ծնիկը տարակուսանքով կանգ առավ և հավանորեն, վճռելով, վոր գայլը խաղում է իր հետ, յերկարացրեց դուռնը ճմեռանոցի ուղղությամբ և սկսեց ուրախ ու սրտազին հաջել, կարծես թե հրավիրելով իր մորը, Արապկային, խաղալու իր և մայր — գայլի հետ:

Արդեն լուսանում էր: Յեվ յերբ մայր—գայլն անցնում էր խիտ կաղամախի անտառով դեպի իր բունը, պարզ յերեվում էր ամեն մի ծառ և արդեն զարթնում էին ցախաքլորները և հաճախ վեր ելին թռչում գեղեցիկ աքլորները, անհանգստացած շնիկի անզգուշ թռիչքներից ու հաջոցից:

«Ինչու՞ ե իմ յետևից վազում, — մտածում էր մայր գայլը գայլութով: — Յերեվի, ուզում է վոր իրեն ուտեմ»:

Մայր — գայլը գայլուկների հետ ապրում էր մի փոսի մեջ: Յերեք տարի առաջ, խիտ փոթորկի ժամանակ, բարձր յեղեվնին արմատախիլ յեղավ, վորից զոյացավ այդ փոսը: Այժմ նրա հատակին հին տերևներ և մամուռ կային, հենց այդտեղ էլ թափթփված էին վրոպիկներ և յեզան պոզեր, վորոնցով խաղում էին գայլուկները: Նրանք արդեն արթնացել էին և յերեքն էլ, վոր շատ նման էին իրար, կանգնած էին կողք կողքի, փոսի յեզերքին և նայելով վերադարձող մորը, սրչը շարժում էին: Գայլուկներին տեսնելով, շնիկը կանգնեց մի քիչ հեռու և յերկար նայում էր նրանց: Նկատելով, վոր նրանք նույնպես ուշադրությամբ նայում են իրան, սկսեց բարկացած հաջել նրանց, ինչպես ոտարների վրա:

Արդեն լուսացավ և արևը ծագեց: Ձյունն սկսեց փայլիլ: Ծնիկը շարունակ հեռու կանգնած, հաջում էր: Գայլուկները ծծում էին իրենց մոր կաթը, թաթիկներով հրելով նրա դատարկ փորը, իսկ մայրն այդ ժամանակ ձիու սպիտակ ու չոր վրոպիկ էր կրծում: Քաղցը նրան տանջում էր, գլուխը ցավեց շան հաջոցից,

ուզեց հարձակվել անկող հյուրի վրա և պատառոտել:

Վերջապես շնիկը հոգնեց և ձայնը խզվեց: Տեսնելով, վոր իրենից չեն վախենում, և նույնիսկ վրան ուշադրութուն չեն դարձնում, սկսեց վոչ համարձակ, յերբեմն պզգելով, յերբեմն ցատկոտելով, մոտենալ գայլուկներին: Այժմ, ցերեկվա շուշով, արդեն հեշտ եր նրան լավ դիտել: Նրա սպիտակ ձակաառ մեծ եր, իսկ ձակաաին կոշտիկ կար, ինչպիսին ունենում են շատ հիմար շներ: Աչքերը փոքր եյին, յերկնագույն, անխայլ, իսկ ամբողջ գնչի արտահայտութունը՝ արտակարգ հիմար: Մոտենալով գայլուկներին, նա մեկնեց լայն թաթերը, դունչը դրեց նրանց վրա և սկսեց «Մըն՝ յա՛, մն՝ յա՛... նհա՛, նհա՛, նհա՛...»

Գայլուկները փոչինչ չհասկացան, բայց պոչերը թափահարեցին: Այն ժամանակ շնիկը թաթով խփեց գայլուկներից մեկի մեծ գլխին: Գայլուկն ել թաթով նրա գլխին խփեց: Ծնիկը կանգնեց կողքով դեպի գայլուկները և ծուռ — ծուռ նայեց նրանց, թափահարելով իր պոչը: Հետո հանկարծ տեղից պոկվեց և սառցածյան վրա մի քանի շրջան արավ: Գայլուկներն ընկան նրա յետևից: Ծնիկն ընկավ մեջքի վրա ու վրտները ցցեց, իսկ նրանք յերեքով հարձակվեցին շնիկի վրա և հիացմունքից վնդստալով, սկսեցին կծել նրան, բայց վոչ թե ցավ պատճառելու համար, այլ կատակով: Ազոավները նստած եյին բարձր ստճու վրա և նայելով նրանց կովին, շատ եյին անհանգստանում: Սկսվեց աղմուկ և ուրախութուն: Արևն այրում եր արդեն, ինչպես գարնանը և արլորները, վորոնք անընդհատ թռչկոտում եյին փոթորկից ընկած ստճու վրայով, արևի փայլի տակ կարծես զմրուխտ լինեյին: Սովորաբար մայր — գայլերն իրենց ձագուկներին սովորեցնում են վորս անել, թույլ տալով խաղալ վորսի հետ և այժմ, տեսնելով, թե ինչպես գայլուկները վազում են սառցածյան վրայով շնիկի յետևից և կովում նրա հետ, մայր — գայլը մտածում եր. «Թող վարժվեն»:

Կուշտ խաղալուց հետո, գայլուկները գնացին փոսը



և պառկեցին քնելու: Ծնիկը քաղցից մի քիչ վնգստաց, հետո նույնպես ձգվեց արևի տակ: Իսկ արթնանալով նորից սկսեցին խաղալ:

Ամբողջ որն ու յերեկոն մայր — գայլը վերհիշում էր, թե ինչպես անցյալ գիշեր դոմում էր մայրում դառնալից և ինչպես էր բուրում վոչխարի կաթը: Ախորժակից նա ատամները չխչխկացնում էր և չէր դադարում ազահությամբ հին վոսկորը կրծելուց, յերևակայելով, Վոր դա գառնուկն է: Գայլուկները ծծում էին մոր կաթը, իսկ շնիկը սոված վազվզում էր և ձյունը հոտոտում:

«Արի, ուտեմ սրան...» — վորոշեց մայր — գայլը:

Մոտեցավ նրան: Ծնիկը լիզեց նրա դունչը և սկսեց վնգստալ կարծելով, Վոր ուզում է խաղալ իր հետ: Կար ժամանակ, Վոր նա շներ էր ուտում, բայց շնիկից մեծ շան հոտ էր գալիս, և վատառողջության հետևյալանքով, այլևս չէր տանում այդ հոտը: Նա զզվանքով նեղացավ:

Գիշերվա դեմ ցրտեց: Ծնիկը ձանձրացավ և գնաց տուն:

Յերբ գայլուկները պինդ քնեցին, մայր — գայլը նորից վորսի գնաց:

Ինչպես և անցյալ գիշեր, նա անհանգստանում էր ամենափոքր շուկից և նրան վախեցնում էին կոճղերը, վայտերը, առանձին գիհի մութ, թիերը, վորոնք հեռվից մարդկանց էին նման: Նա վազում էր ճանապարհի մի կողմով, սառցածյան վրայով:

Հանկարծ բավական հեռու, ճանապարհի վրա, ինչ Վոր մի մութ բան պեծին տվեց: Մայր — գայլը լարեց իր աչքերն ու ահանջները: Իսկապես առջևում ինչ Վոր մի բան գնում էր և նույնիսկ լսելի էին համաչափ քայլեր: Չլինի՞ թե գորշուկ է: Նա զգուշությամբ, հագրիվ շնչելով, միշտ մի կողմով վազելով, անցավ մութ բիծը, յետ դարձավ նայեց վրան և ճանաչեց. դա սպիտակ ճակատով շնիկն էր, Վոր հանդարտ քայլերով վերադառնում էր իր ձմեռանոցը:



«Չլինի թե նա ինձ նորից խանդարի», — մտածեց  
Ջայր գալը և արագութեամբ առաջ վազեց:

Բայց ձմեռանոցն արդեն մոտ էր: Մայր — գայլը  
ձյունահոլուտի վրայով նորից գոմի կտուրը բարձրացավ:  
Յերեկվա անցքն արդեն ծածկված էր ծղոտով և կտուրի  
վրա յերկու նոր բարակ գերան էր դրված: Մայր գայլն  
սկսեց արագորեն աշխատել վոտքերով ու դնչով, յետ  
նայելով, վոր տեսնի, թե չի՞ գալիս արդյոք շնիկը:  
Բայց հազիվ նրա քթին դիպավ տաք դոլորչին և դո-  
մագբի հոտը, վոր յետևից ուրախ և սրտագին հաջոց  
լավեց: Շնիկն էր վերագարձել: Նա ցատկեց մայր-գայ-  
լի մոտ, կտուրը, հետո անցքով վար ցատկեց և իրեն  
զգալով տանը, տաք տեղում, ճանաչելով իրենց վոչ-  
խարներին, սկսեց ավելի բարձր հաջել: Արապկան, վոր  
սրահի տակ էր, արթնացավ և զգալով գայլի ներկա-  
յությունը, վոռնաց: Հավերը կշիչացին:

Յեվ յերբ պատշգամբի վրա յերեկաց իգնատը իր  
միտոզանին ձեռքին, վախեցած մայր — գայլն արդեն  
չատ հեռու էր ձմեռանոցից:

— Հյո՛ւյտ, — շվացրեց իգնատը, — հյո՛ւյտ, քչիւր  
ինչքան ույթ ունես:

Նա քաշեց հրացանի շնիկը: Հրացանը վրիպեց:  
Քաշեց ելի մի անգամ՝ դարձյալ վրիպում: Քաշեց  
յերրորդ անգամ: Կրակե ահագին փունջ դուրս թռավ  
հրացանի փողից և լավեց խլացուցիչ բու՛մ — բու՛մ:  
Հրացանն ուժեղ յետ ավեց նրա ուսին: Մի ձեռն առնե-  
լով հրացանը, իսկ մյուսը՝ կացինը, գնաց նայելու, թե  
ինչ աղմուկ է:

Քիչ հետո վերագարձավ խրճիթը.

— Ինչ՞ կա, — խռպոտ ձայնով հարցրեց ճանա-  
պարհորդը, վոր ոթեվանել էր նրա մոտ այդ գիշեր և  
արթնացել աղմուկից:

— Վոչի՛նչ... — պատասխանեց իգնատը — դա-  
տարի բան է: Սովորել է մեր սպիտակաճակատը քնել  
փոչեւարների հետ տաք տեղում: Միայն թե չի հասկա-  
նում, թե դռնով պետք է դուրս գալ և միշտ առիթ է

փնտռում կտուրով դուրս գալու: Մի քանի որ առաջ  
գիշերը քանդել էր կտուրը և գնացել ման գալու:  
Սրիկա՛: Իսկ այժմ վերագարձել է և նորից կտուրը  
ցիր ու ցան արել:

— Հիմա՛ր:

— Այո՛, ուղեղի մի պտուտակը կտորվել է: Մահու-  
չափ ատում եմ՝ հիմարներին, — բարձրանալով վառա-  
բանի վրա, հառաչեց իգնատը: — դեհ, մարդ ասածո,  
պեռ վաղ է. արի մի լավ քնենք:

Առավոտյան իգնատը կանչեց իր մոտ սպիտակա-  
ճակատին, քաշեց ու ցավացրեց ախանջները և հետո  
ճիպոտով խրատելով, շարունակ կրկնեց.

— Դռնո՛վ անցիր: Դռնո՛վ անցիր: Դռնո՛վ անցիր:





Հրատ. 4137. Գլ. լիազ. Խ— 9282 Պատվ. 874, Տիրաժ 4000

Հանձնված և արտադրության 20 հունիսի, 1937 թ.


Ստորագրված և տպելու 23 ոգոստոսի, 1937 թ.

Թուղթ 62×94. Տպագրական 1 մամ. մեկ մա-

մուլում 30720. նիշ հեղինակային  $\frac{3}{4}$  մամ.

---

Պետհրատի տպարան, Յերևան, Լենինի, 65



« Ազգային գրադարան



NL0386899

22

4577

ԳԻՆԸ 50 Կ.

052284

А. П. ЧЕХОВ  
Белая лобая  
Гиз Арм. ССР, Ереван, 1937 г.

Handwritten signature or mark